

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՎՈՂՄԱՆ

Երկու քիւրմիկ ծաւրով

Տարեկան... 14 Ժր.

Վեցամսեայ... 7 Ժր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

4 Ա Ն Ո Ւ Կ

Թանոցընան սողը  
20 տակրիս



# ԺԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction d. journal

„gravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„равунк“

ВАРНА

Գրութեանը ետ չեն  
տրոշիր

## ԻՆՉՈՒ ՄԵՆԲ ԿԸ ԼՈՒՆԵՔ

—\*—\*—

Նշանաւոր եւրոպացիներու կողմէ ստորագրուած և Ամերիկայի նախագահին մատուցուած խնդրագիր մը թուրքիոյ հայոց վիճակը բարելաւելու նպատակաւ Հայկական Խնդիրը Հասէյի Խաղաղութեան երկրորդ համաժողովին առջեւ հանելու և կամ մասնաւոր դեպքանախօսով մը գումարելու առաջարկը ըրած էր :

Այս առաջարկը ամերիկեան մեծ հանրապետութեան նախագահին կողմէ համակարար ընդունելութեան մը արժանացած ըլլալ թուեցաւ երբ իմացանք թէ նոյն խնդրագրին պարունակութիւնը ամբողջովին ինք հարկ է դառնար մամուլ յանձնելանշուշտ այս միջոցաւ իմանալու և նոր գաղափար մը կազմելու համար միջազգային քաղաքական կարծիքի մասին որ պէտք է յայտնուէր պետութեանց կէս պաշտօնական թերթերու և կուսակցութեանց օսկաններու միջոցաւ : Հայոց համակիր թերթեր արդէն առանց անոր ալ առիթը չեն փախցներ մեր տառապանքը ամօքելու համար այլ և ալ միջոցներ առաջարկելու : Իսկ Հայոց վիճակով քիչ հետաքրքրուող թերթեր միայն խնդրագրին պարունակութիւնը յիշելով անցան, առանց իրենց կողմէ նպաստաւոր կամ անընդհատ դիտողութիւն մը ընելու : Հետեւապէս խնդրագրին հրատարակութեամբ միջազգային հանրային կարծիքին որոշ եզրակացութիւն մը կարելի չեղաւ հանել ցարդ :

Այժմ Մ. Ռօզվէլթ կը մնայ կրկէսին վրայ դէմ առ դէմ Սուլթան Համիտին : Մեծ Հանրապետութեան նախագահը իր Պոլսոյ դեսպանին Դրան ըրած դիմումներուն յաջորդութիւնը ապահովելու կամ Սուլթանին ահազելու համար չէր որ անշուշտ այս խնդրագիրը հրատարակու-

թեան տուաւ : Բայց առաջարկութիւնը իրականացնելու համար ահագին դժուարութիւններ կան իր առջեւ : Գժուարութիւններ որոնց շատը Սուլթանին և իր բարեկամ միլիտարիստներու կողմէ պիտի ծագին : Կողմէ յաղթել պէտք է : Յաղթութիւնը մեր կողմին մնալու համար բողոքի ձայները զօրացնելու եւ աւելցնելու պէտքը կայ : Այո՛, հայասէր եւրոպացիներ, բոսֆոսէօրներ, երեսփոխաններ և նոյնիսկ նախկին նախարարներ այդ հայանպաստ դիմումը ըրած լինելով մեզ երբէք չեն ներքոր ձեռնպահ և մունջ նստինք իբր պարզ հանդիսատեսներ : Տեսէք Հրեաները որոնք դեռ քիչ օր առաջ Նիւ-Եօրքի մէջ հարիւր հազար անձերէ բաղկացեալ թափօր մը կազմեցին դիմելու համար Մ. Ռօզվէլթին ի նպաստ Ռուսիոյ մէջ հալածուող Հրեաներուն, և մէկ միլիոն տալէր հաւաքեցին Ամերիկայէն նոյն նպատակաւ : Անգամ մըն ալ յիշենք հոս Պուլկարները, որոնք հայկական խնդիրը սեզանի վրայ դրուելուն պէս միթիւններով և աղմուկներով Մակեդոնիոյ հարցը առաջ քշելէ երբէք չեն թերացած : Իսկ այսօր որ Հայկական հարցէն յետագաս նկատուած մակեդոնական հարցը այլևս որոշ չափով լուծուած մը գտած է և միջազգային դիւանագիտութեան զբաղման նիւթ եղած է և միևնոյն ատեն եւրոպացի աւանաւոր դէմքեր մեզ ի նպաստ դիմումներ կընեն, ի՞նչու մենք լուենք, ի՞նչու անգամաւոր չի պէս ընկողմացած կը նստինք, մանաւանդ սա արտասահման գտնուող հայերս : Ի՞նչու մեր խնդրագիրները և բողոքագիրները չը ներկայացնենք հարկ եղած տեղերը, և ի՞նչու ոյժ չտանք մեր եւրոպացի բարեկամներու դիմումին : Այլ ի՞նչ առիթի կը սպասեն մեր պաշտօնական մարմինները, առաջնորդարաններ և Թաղականութիւններ, որոնք պարտականութիւն ունին տէրտէրի և տի-

րացուի խնդիրներէ զատ բուն կենսական խնդրով ալ գէթ աստիճան մը զբաղելու : Քանի որ իրենք ներկայացուցիչներ են թէ տեղացի և թէ արտասահման ապաստանած հազարաւոր հայ պանդուխտներու որոնց ընտանիքը, զաւակները, ծնողները տունը ու ստացուածքը վտանգի ենթակայ է թուրք բռնակալութեան տակ : որուն դէմ միշտ բողոք ունին կըլնած իրենց այն իրաւունքներուն վրայ զորս պետութիւնք ճանչցած և երաշխաւորած են դաշնագիրներով :

## ԿՈՎԿԱՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ

Մշակ ին մէջ կը կարգանք :

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերս Թիֆլիս են հասնում կ և դ և հեռագիրներ հայ-թուրքական ընդհարումների բնաւորութեան մասին : Հեռագիրների մէջ հաղորդված են լինում սուտ տեղեկութիւններ հայ խմբերի, հայերի դէպի ռուսական զօրքերը ունեցած արամադրութեան մասին : Անկասկած է, որ կայ մի դաւ, որ ձեռք տուած է չար նպատակների : Մեզ յայտնի է, որ փորձեր են եղել կեղծ, հայատեաց հեռագիրներ ուղարկել Պարսկաստան, Թիւրքիա եւ նոյն իսկ Անգլիա : Պրօֆօկատօրական հեռագիրների նպատակն է ցոյց տալ հայերին իրեն անհաշտ խռովարարներ, որոնք ազդեցիկ նպատակներ ունեն ուղղված ռուսական զօրքի, պարսկահայատակների դէմ : Որքան էլ թեթեւամիտ եւ ծիծաղելի համարվի այդ կեղծքը, սակայն նա կարող է որոշ դեր կատարել, միամիտներին մոլորեցնել եւ տրտուր հետեւանքներ առաջ բերել իրականութեան մէջ :

Բարվանսարայից, յունվար 4-ին, հեռագրում են :

Զորքերը օրն է թափվելէնդ գիւղը չընկալուած է սալախիցի, կրակակէսամանցի, դախկէսամանցի, աչքէկնախցի եւ խանուխլարցի թուրքերով, թուով 5000 մարդ : հրացանաձուլութիւնը չարունակվում է :

Թաւուզէ 2 յունվարին հեռագրում են :

Թաւուզ կայարանից հինգ վերտ հեռադրութեան վրա սկսված է թուրք-հայկական կռիւր : Թուրքական գիւղերը չեն կարող դիմանալ յարձակմանը եւ հայերը շարունակելու են մինչև կայարանից ցած գտնված գիւղերը :

Կայարանի պաշտպանութեան համախոհները միայն 8 զինուոր : Լուրերի նայելով կուող հայերի թիւը 800-է հասնում :

Կայարանից լսվում են ուժեղ հրացանաձուլութեան ձայներ : Ժառանգները սարսափի մէջ են : Խնդրում են օգնութիւն :

Թօքմաշիվ

Ղազարի գաւառի Բարանա գիւղից մեզ հաղորդում են հետեւեալը :

Մեր ճանապարհից անյայտացած ինն հոգի հայեր, որոնց մասին իր ժամանակին յայտնված էր մամուլի էջերում, թուրք օսկէպառ գիւղի մօտ «զարահաձգի» կոչված գոմերում, գտնվել են կիսապարկած : Ինչպէս երեւում է պրիստաւի տեղապահը, դէպք տեսաւ դիակներին մնացորդները :

Այս բարբարոս գազանութիւն կատարող խմբի գլխաւորներն յայտնի են տեղական ժողովրդին :

Արշակ Տէր-Խաչատրեանց

Շուշուց մեզ հաղորդում են յունվար 3-ին :

Դեկտեմբերի 30-ին, ահագին թուով քիւրդեր յարձակուան գործեցին Ղազարըշլաղի վրայ առաջնորդութեամբ մի մօլլաի : Հայերը քաջարար պաշտպանվեցին : Երեկոյան թուրքերը յետ մղվեցին դիքերից, նրանցից շատ մարդ է սպանված, հայերից միայն մի քանի հոգի :

«Քասպիկ» պաշտօնական լրագրում կարդում ենք : «Անդրկովկասի երկաթուղիների Բագուի, Կարսի եւ Երեւանի գծերի վրա բոլոր ծառայողներին սկսեցին գործել : Արդէն այդ մասերում ուղարկուած են օրական մի զոյգ զնացքներ : Դժի պաշտպանութեան գործում զօրքերին օգնելն իր վրա առաւ շրջապատի թուրք ազգաբնակիւթիւնը : » Թուրքերին յանձնուած են : ուրեմն՝ անդրկովկասեան գծերի պաշտպանութիւնը . . . եւ այսուհետեւ էլ ո՞վ իրաւունք կունենայ բողոքելու աճող աւաղակութիւնների դէմ :

Կովկասի փոխարքան եւ իր ամուսինը նստեցին եւ թիֆլիսում հայ-թուրքական յարաբերութիւնները վնասված թուրքերին 1000 ռուպլի : Նոյն նպատակի համար «գեներալ Մալախովի զուգահեռներ» նուիրել են 15 ռուպլի : Թիֆլիսի վրաց հասարակութիւնը—71 ռուպլի եւ 50 կոպէկ : Եւստպի պաշտօնականները 58 ռուպլի եւ 70 կոպէկ եւ պղին :

Պաշտօնական «Բասպի» լրագիրը հաղորդում է, որ վրաց եկեղեցական-ծխական դպրոցները շուտով անցնելու են ժողովուրդական լուսաւորութեան մի-նիստութեան իրաւասութեան տակ :

Ղազարի գաւառից մեր ստացված ամենավերջին տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ այնտեղ հայերի եւ թուրքերի մէջ նորից տեղի է ունեցել ընդհարում : Լեռնամասում ապրող հայերը, նկատելով թուրքերի հրոսակների բազմանալը, նախ դիմադրողական դիրք են վերցնում, իսկ յետոյ յարձակումներ են գործում եօթ թուրքական զիւղերի վրայ : Գաւառացիներն օգնականը եւ կողակներին խուճը գնում են պաշտպանելու թուրքերին : Տեղի է ունենում խիստ ընդհարում : Լուր է տարածվել թէ, վիրաւորված են գաւառացիներն օգնականը եւ երկու կողմէ : Ապաստում ենք ստոյգ լուրերին :

Բարվանսարայից երէկ, յունվար 3ին ստացանք հետեւեալ հեռագիրը.

«Թաթիլքէնդը երրորդ օրն է պաշարված է թուրքերից : հրաձգութեան ժամանակ սպանվեցին երկու հայեր, շատ թուրքեր : Կոնը շարունակվում է : Դեկտ. 31 ին թուրքերը պաշարեցին Չամբարաքը. հրաձգութիւնից յետոյ թուրքերը հեռացան, թողնելով 5 սպանված : հայերից վիրաւորված են 2 հոգի : Բաշքէնդի օգնութեան գացող հայերը յունվարի 2 ին պատահեցին Կարազօյլընցիներին եւ հրաձգութեան ժամանակ հայերից սպանվեցին երկուսը, թուրքերից քսանը : Բժշկական օգնութեան պէտք կայ :

Ինչպէս յայտնի է, Կարալիսազի հայերը թալանվեցին չրջակայ թուրքերի

ձեռքով, որոնք տարան մօտ 180,000 ռուբլու տաւար եւ ապրանք : Թիֆլիսի նահապետական կարգադրել էր, որ թալանը յետ դաժնեն, քայքայ թուրքերը ոչ մի ուշադրութիւն չը դարձրին այդ հրամանին : Երկու օր անոց Կարալիսազից եկած մի պատգամաւորութիւն ներկայացաւ Թիֆլիսի ժամանակաւոր զինեալ-նահապետական զենեալը Ալիխանովին եւ խնդրեց ստիպել թուրքերին վերադարձնել տաւար : Մեզ հաղորդում են այժմ, որ գեներալ Ալիխանով կանչելով Թիֆլիսի թուրքերին, հրամայեց մինչեւ 5 օր վերադարձնել տաւար : Թուրքերը յայտնեցին, որ կը կատարեն գեներալի հրամանը միայն այն պայմանով, որ հայերը դատաւարական գործ չը սկսեն նրանց դէմ : Գեներալը յայտնեց, որ այդ դատարանական իշխանութիւնների գործն է : Հայերը յայտնեցին, որ թուրքերը իրանցից խլած տաւարի մի մասը տարել են խազախ եւ փոխանակել այդտեղի թուրքերի տաւարի հետ, որպէսզի հետքերը կորսնցնեն :

Մեզ հաղորդում են, որ Բագուի քաղաքագլխի պաշտօնակատար Սաֆար Ալիէվ մի հեռագրով յանուն կովկասի փոխարքայի, յայտնելով, որ Շուշում հայերը սկսել են կոտորել թուրքերին, խնդրում է անմիջապէս միջոցներ ձեռք առնել, այլապէս զրգուար կը լինի զսպել Բագուի թուրք ազգաբնակչութիւնը :

## 50 ՄԻԼԻՈՆ ՍՈՒՐԵՐ

Պ Ա Տ Ր Ա Ս Տ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻ ԿՈՎՈՐԴՆԵՐԻՆ

(Թրգմ. «Չիքակո-Ամերիկան» լրագրէն)

Արդեօք խորհրդաւոր քողի տակ ծածկուած «Բաֆոն»-ի մարգարէն պատրաստ է տալու այն նշանը, որով 50 միլիոն ֆանատիկ զինուած Մահմետականներ պիտի յարձակուին քրիստոնէայ խաչաւորի վրայ : մարդիկ որոնք անհամբեր սպասում են Սուրբ Պատեւրազին, հաւատացած լինելով որ «Արքայութիւնը գտնուած էր չուազում» :

Այս հարցն է որ Եւրոպական ուժերը զալիս են միմեանց այն օրից,

երբ իրանց մարտանաւերը պատրաստուեցան ճարտանշէլը ուժակոծելու իսկ թրքաց Սուլթանը բացարձակապէս ըստպատնացաւ ընդհանուր քրիստոնէաների մի ջարդ :

Այս ուժերը վաղուց ծանօթ էին Սիսի էլ Սեկիւսի Մարգարէին, իւրանում նաեւ, որ նա ունի անհամար հետեւողներ ամեն այնտեղ, ուր կայ Մահմետականութիւն : Բայց երբեք չէին երեւակայում, որ իսլամ տարրի քաղաքական եւ կրօնական պետ Սուլթան-Ապտուլ-Համիտը կարող էր Մարգարէի ուժը ծառայեցնել իրա քաղաքական նպատակներին :

Այժմ նրանք Սուլթանի բռնած կրօնաւար դիրքից պատրաստ են հաւատալու, թէ քսան տարիների անընդհատ շարաւուգ պատրաստութիւններից յետոյ, վերջապէս Բան-Խալիլը պատրաստ է մահու եւ կենաց կռուին քրիստոնէայ խաչաւորի դէմ :

Ամերիկան չէ վրդովում : Սակայն Եւրոպան սոսկումով պարտաւոր է հաւատալու որ էլ-Սեկիւսի վերջապէս յաջողիկէ միացնել Հնդկաստանից «Հոն-սայանտ», Մարօքից, Թրիբօլի, Ֆալատից, Մէքէ եւ Պալէստինայ երկրներից մինչեւ Նեղոսի սկիզբները տարածուող բոլոր սպիտակամորթ Արաբ եւ Սեւամորթ ֆանատիկ ու վայրենի Մահմետականներին :

Ամենից աւելի վրդովուել են Անգլիան ու Ֆրանսան, հաւատացած լինելով, որ Ափրիկէի 200 միլիոն բնիկ վայրենիները կամ հաւաքուել են կանանց դրօշի տակ եւ կամ անկախօրէն պիտի նպաստեն սպիտակների զինման գործին :

Արդէն երկու կեղծ մարգարէներ, Դոնկալոսի Մէհտին եւ Օմուրմանի խալիֆան, Անգլիային թափել տուեալ են հազարաւոր մարդկանց արիւն եւ միլիոններով գանձ : Բայց սրանց համեմատած նոր հոսանքին ոչինչ չէ, օրը սպանում է համախառնային մի մեծ վտանգ : Այժմանը չը պարփակուած մի նահանգի կամ ցեղի մէջ, այլ նա իրա զրօշի տակ հաւաքել է միլիոններով արիւն-ծախալ ֆանատիկներ : որոնք արքայութիւն գնաւու միակ միջոցը գտնում են մեծ թով քրիստոնէաներ ջարդելու : Հարցրէք Անգլիային եւ նա կասէ ձեզ, թէ այդ մարդիկ ինչպէս էին կուռում, հաճոյքով նետվում էին կրակը եւ մեռնում :

Վերոյիշեալ մարգարէները ապստամբութիւնը յախուռն եւ տկար մտա-

ծողութեան արդիւնք էր, օրովհետեւ նրանք թէ լաւ կազմակերպուած չէին եւ թէ զինուել էին շատ թոյլ :

Սակայն այժմու տարբերութիւնը հազարն է : Սիսի Մուհամմէտ-էլ Սեկիւսին ծրուած է Ալեքսիանում, Մօթականի մօտերը, 1810 ին : Յետոյ Օրէնագէտ գանուր է եւ իրա անվախ լեզուին համար թուրք պետերի հետ ընդհանրուելով աքսորում է Մարօկկա եօթ տարով : Այնտեղ նա ուսումնասիրած է կրօնը եւ Ալեքի վերադառնալով սկսում է տարածել իրա նոր հաւատը, թէ այնտեղում եւ թէ Եգիպտոսում : Օրթոդոքս Մահմետականութեան առաջնորդները գտնելով նրան գայթակղեցնող եւ վնասակար մի անձնաւորութիւն գաւազնում են, փորձում նրան թունաւորել : Նա փախում է Մէքէ, այնտեղ իրա կարողութեամբ եւ հմտութեամբ համբաւ ստանում եւ քահանայապետը վախճանուելուց կարգում է նրա փոխանորդ :

Ի վերջոյ Սիսի էլ Սեկիւսին որպէս քարոզիչ ման է գալիս Սրաբիայի եւ Եմէնի բոլոր կողմերը եւ իրա ճարտար քարոզներով որսում է բոլոր ֆանատիկ «Վահապի»ներին, որոնք սերունդներով թուրք Սուլթանների աչքի փուշ են ելած : Հաստատում է թրքալուծում բայց էլի թուրք պաշտօնատարների հետ թաղիւտելով փոխադրում է «Թէպիւպ» սիրուն, հրապուրիչ եւ ջրարբու Օվասիւր, Լիբանանի անապատում : Այստեղ նա դառնում է անմատչելի բոլորովին բացի իրա երգուեալ աշակերտներին : Եւր Սեկիւսի ու իրա կեանքի վերջին տարիները անց կացնում հրահանգներ տալով, քարոզիչներ մարդկելով, իրա ուժը եւ գործը հաստատ գործի վրայ դնելով եւ հղկելով, ճանապարհ իրա որդւոյն, ներկայ մարգարէին, որը յայտարարում է իրան որպէս իսկական Մահտի, Մահմետականների Մէսիան : Եւր Սեկիւսի մեռնում է 1859 ին եւ թաղուած «Թէպիւպ» ում մի թանկագին շիրմի մէջ : Սկսած այն օրից այստեղ դառնել է մի տեսակ Մէքէ, եւ ամբողջ Ափրիկէից, Արաբիայից, Տաճկաստանի բոլոր կողմերից Եւրոպայից, Ասիայից Հնդկաստանից եւ այլ տեղերից գնացող տարեկան ուղևորներին թիւը հասնում է միլիոնների :

Այժմու Սեկիւսին տեսել է միայն մի սպիտակամորթ մարդ—վերջին «Հեռադիկալ», մեծ Գիրմանացի Թուրիստը,

## ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

( Արտատպուած «ԱՐԵՒԵԼԻ»-էն )

[ Եար. նախորդ թիւէն ]

ԸՆԴ. ԴԱՏԱԽԱՂԱԶԻՆ ՃԱՌԸ

Ինչպէս վերը բացատրուած է եղեւ—նական արարքին գործադրութեան օրը մօտեցած ըլլալով, Ժօրիս իր եպիսկոպի ազգաբարձութեամբ, խորհուրդ տուած էր պաթուցիկ զօրաւոր նիւթը երկաթէ պահարանի մը մէջ դնել, որպէսզի աւելի ազդեցիկ ըլլայ : Նկատողութեան առնուելով այն պարագան թէ այդ սնտուկը դէպքէն քիչ առաջ չինուել սկսած է, քննութիւն ու խուզարկութիւն կատարուելով զիրար

հաստատող բազմաթիւ վկայութիւններով յայտնի եղած է հիմա ամբաստանեալներուն հետ գտնուող եւ Թոփ-խանէի չրջակայքը երկաթադործի խանութներուն մէջ աշխատող երկաթագործ Մանալ ու Միլթօ, իրենց զիմող անձանցի անձերու կողմէ տրուած բացատրութեանց համաձայն եւ իրենց արհեստին համար անձանցի եղանակով մը երկաթէ սնտուկ մը չինած են՝ քարեղի երկու թիթեղեայ տուփի տարողութեամբ եւ չորս կողմէ պտուտակներով կցուած : Վերագրեալ անձերը այդ սնտուկը մօմազօծ կտաւի մէջ փաթեցելով ախոռը փոխադրած են :

Նկատողութեան առնելով այն պարագան թէ Սիւլիօ Րիչի որուն համար քանիցս յայտարարուեցաւ թէ Բերայի ցոփութեանց ստորին խաւերուն մէջ ծանօթ է, քանզի նիւթին պայթածնը համար ձեռք բերուած երկկտրական զօրութիւնը պատրաստած է այդ

արուեստին մէջ ունեցած ճարտարութեամբը, ուստի այդ խնդիրները խնամով քննուեցան : Բազմաթիւ վկայութիւններով հաստատուեցաւ թէ Սիւլիօ Րիչիի երկու անգամ, Բերա Բասաթ Թիւնէլին մէջ խանութ ունեցող եւ երկկտրական գործիք ծախող Երուանդ Աճէմեանէն գնած է երկկտրական գործիք մը՝ իրարու կցուած զԸՐ-պանի լապտերներէ բաղկացած եւ տառնեցիկ «վոլթ» ուժ ունեցող : Նաեւ ծախու առեր է կարմիր գոյնով եւ երկու մէթրի չափ հաղորդիչ թել : Կատարուած քննութիւնը այդ կերպով տուալ տարուել է եւ քանզի նիւթը պարունակող սնտուկը ու զայն բռնկեցնելու համար հարկ եղած երկկտրական զօրութեան ձեռք անցուելու տեղը ու եղանակը հաստատուել է ետքը, խիստ կարեւոր էր զիմալ թէ Ժօրիս տունէն փոխադրուելով սպասած հարկը քառասուն քիւ «մէլէ-նիթ»-ին մնացած մասը ուր կը գտնու-

ւի : Ուստի ատկէ վերջը ամենէն աւելի այդ պարագային քննութեանը ու խուզարկութեանը ձեռնարկուեցաւ :

Այդ միջոցին, ինչպէս նախապէս յայտնուեցաւ, Լիբա Րիբսի կողմէ Գըրէտի Լիոնէ պանքային միջոցաւ Իզմիրի մէջ Տիգրան Նալպանտեանի զբոհումը գրամին համար քննիչ մարմինը պէտք եղածը գրեց Այտնի կուսակալութեան : Այդ կուսակալութիւնը քննութիւն կատարելով սա պարագաները երաւուն հանեց. — Մարդիկայի ժողովուրդէն Նալպանտեան Տիգրան ու Անդրէաս, որոնք իրենց ծննդավայրին մէջ աղքատ էին, եօթրորդ ասիս առաջ Իզմիր երթալով, քարափին վրայ խանութ մը վարձած էին եւ կովի մսավաճառութիւն կընէին : Այստեղ համար հաստատուեցաւ թէ մէկը Տիգրան Նալպանտեան անուն անձն է : Այդ երկուքը հարցաքննուելով անոնց յայտարարութիւններէն հաստատուեցաւ թէ Գոմիթէճիները Այտնի

Եւ անհուն հիացել մարգարէի իմաստութեան եւ քաղաքագիտութեան վրայ։ Ասուէ՛ք, որ էլ Սեֆիւսն սիրելի ուղղակի Մուհամմէտի ամենասիրելի կինն, Աշա Ինջն, նրա կողմի վարձուքը գէպի կրօնը, խորհուրդներն ու մտքերը բոլորովին համապատասխան են Մահաբին, Մեհաբին, Նրա մի բազուկը միւսից երկար է, աչքերը կապոյտ, եւ կրօն իրա կրօնքերի կեդրոնում արդար ու անընկճելի նշանը։ Նա պահանջում է իրա հետեւողներէ, որոնք հարկւարաւոր միջոցներին են հասնում, ապրել Մահմետականութեան նախկին պարզութեամբ։ Արեգիլում է ա՛յ միայն ուժեղ խմելք, այլ նոյն իսկ աւորձ, եւ ծխախոտ, ինչպէս նաեւ մետաքսեղէն, ոսկեղէն, արծաթեղէն կամ որ եւ է աշխարհային հարստութիւնք արտայայտող հագուստ կամ զարդ կրելը։

Էլ Սեֆիւսն հէնց որ մի նոր գաղութէ ձեռք ձգում, կարգում եւ ուղարկում է այնտեղ մի Մօֆաշիւ կամ քահանայ եւ մի «Վէքիլ» կամ փոխկառավարիչ եւ այսպիսով կողք կողքի յառաջ տանում իրա թէ կրօնական եւ թէ քաղաքական ուժն ազդեցութիւնը։ Նա մի այնպիսի ճարտար քաղաքէն է որ յամառ գնելով գերիներէրի ահագին կարաւաններ, սովորացնում է նրանց իրա խորհրդաւոր հաւատը, եւ ուղարկում Ափրիկէի բոլոր կողմերը, որ իրա դաւանանքը տարածեն։ Սուտանի մարգարէները քանիցս առաջարկել են էլ Սեֆիւսին ին միանալ իրանց, բայց իրա կարող ուժերին գիտակից այս մարգարէն խորհտաբար միշտ մերժել է ասելով, «Ես ի՞նչ գործ ունիմ Դօնկալի այդ ֆաքիրների հետ»։

Ամենահիմալափելին Տաճկաց Սուլթանի գէպի Սեֆիւսի հակելէն է, միջոցաւ նա միշտ սաստիկ հակառակ է եղել Մահմետական բարեկարգիչներին, որոնք միշտ մերժել են նրան խալիֆայի տիտղոսը տալ։

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՊԱՐՄԻԿ ՀԻԻՊԱՏՈՍԱՐԱՆՈՒՄ

Մի պատգամաւորութիւն էր ընտրվել, բաղկացած պ. պ. Ա. Քալանթարից, Ա. Մելիք-Ազարեանից, Ս. Յարութիւնեանից, Տ. Եովհաննէսեան-

նահանգին նկատմամբ ոճրագործական կարգ մը մատգործութիւններ ունին։ Նոյն միջոցին զիպուածով սա գէպը պատահեցաւ։ Իրարու հետ կոռուզ երկու Հայերէն մէկը վիրաւորուած, ըսաւ Յոյնի մը, որ փախչողը բռնել նել կուզէր, թէ ինքզինքը վիրաւորած է եւ թէ փախչողին չդպչի։ Յոյնը կասկածելով, տեղեկութիւն հաղորդեց տեղական կառավարութեան։ Թէեւ այդ երկու հայերը կարելի չեղաւ ձերբակալել, սակայն անոնց իսկութիւնը հաստատուեցաւ եւ անոնց տուններուն մէջ խուզարկութիւն կատարուելով, գտնուեցան մեծ սնունդի մէծ դրուած լեցուն ու «քարափել»ով «սինամիթի» լոբապարաններ քարիւղի առեփով «տինամիթ» ի պատրոյներ, կարգ մը վնասակար զէրութիւններ, 115 հատ լեցուն «գոմապարա», յիսուներեք զատ «տինամիթ» ի բաքէթ, ասոր տուփ «տինամիթի» «քարսիւլ» ու ելեկտրական «թիւ»եր,

նից եւ Հ. Առաքելեանից, ներկայանալով պարսից հիւպատոսին եւ յանուն Թիֆլիսի հայ ազգաբնակչութեան նախ, մատուցանելու չնորհակալութիւն եւ արտայայտելու երախտագիտական զգացումներ Շահնշահի կառավարութեան. երկրորդ՝ քացատրելու այն միջոցները, որ հայերը վերջին գէպերի ժամանակ ձեռք էին առել պաշտպանելու պարսկահպատակներին կեանքը ու գոյքը։

Երէկ, հինգշաբթի, դեկտ. 8 (21) ին պատգամաւորութիւնը ներկայացաւ պարսից ընդհանուր հիւպատոսաւանի կառավարիչ Անուզ Խանին եւ յայտնեց նրան իր միտքին, Հիւպատոսի պաշտօնակատարը չնորհակալութիւն յայտնելով պատգամաւորութեան այն ջերմ զգացումներին համար, որ Թիֆլիսի հայ ազգաբնակչութիւնը ի գէմ նրա արտայայտում է պարսից կառավարութեան հիւպատոսարանին, յայտնեց միեւնոյն ժամանակ հետեւեալը։

«Ես եւ մեր հիւպատոսարանի բոլոր պաշտօնեայինքը կարող ենք հաստատել եւ վկայել, ինչպէս արդէն պաշտօնապէս զեկուցել ենք արեգակնափայլ Շահնշահին, սաղաքամին իւր արտաքին գործերի մինիստրութեան որ արդարեւ, Թիֆլիսի վերջին գէպերի ժամանակ հայերը ահագին թւով պարսկահպատակներ ազատելով, պաշտպանելով պահպաններին ուղեկցութեամբ խումբ խումբ բերում հասցնում էին մեր հիւպատոսարանը եւ յանձնում մեզ եւ հոգ էին տանում, որ նրանց գոյքը չը թաւանջի ու չը կողոպտվի։ Իրանք ազատված պարսկահպատակները այդ մասին յայտնել են մեզ չնորհակալութեամբ։ Մեր ինքնակալ Շահը եւ սաղաքամը, ինչպէս եւ ամբողջ կառավարութիւնը տոգորված են յաւագոյն զգացումներով հայերի վերաբերմամբ եւ ոչ մի միջոց չեն խնայի, որպէսզի Պարսկաստանում որ եւ է խռովութիւն կամ թշնամութիւն չը սկսվի հայերի գէմ։ Շահը մի աչքով է նայում իր բոլոր հիւպատակներին—եւ մուսուլմանի եւ հայի եւ հրէայի վրայ, բայց առանձնապէս գնահատելով հայ տարրի կուլտուրական յատկութիւնները, Նորին մեծութիւնը մեծ հնարաւորութիւն է տալիս հայերին զարգանալ եւ բարգաւաճել անտեսապէս ու ազգայնապէս, մանաւանդ առեւտրական ասպարէզում։ Մենք խորապէս ցաւում ենք, որ հայերի

եւ թուրքերի մէջ ընդհարումները շարունակվում են, բայց յոյս ունենք, որ հայ ժողովրդի խոհեմ եւ ինտելիգենտ մասը ամեն միջոց ի գործ դնելով հնել այդ ցաւալի ընդհարումներին»։

Պատգամաւորութիւնը իր ցաւը յայտնեց, որ, ընդհարումների ժամանակ, պարսկահպատակները եւս վնասներ են կրել եւ այժմ ստիպված են գաղթել։ Բայց հայերը ոչ մի միջոց եւ ջանք չեն խնայել եւ չը պէտք է խնայեն ամեն կերպ պահպանելու պարսկահպատակներին, որոնց գէմ հայերը ոչ մի թշնամական զգացում չեն տածում։

Հիւպատոսը յայտնեց, որ պատգամաւորութեան արտայայտած զգացումները հեռագրով կը յայտնէ Շահնշահին եւ կառավարութեան։

Մշակ

ԱԶԳԱՅԻՆ

Երուսաղէմի վանքի գանձարանին իր հնութեամբը շատ յարգելաւետարանի մը գողցումը ըլլալը անցեալ տարի Պոլսոյ թերթերը գրեցին եւ ունեցաւ այդ գողութիւնը վերագրեցին Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին որ Երուսաղէմի վանքին նախորդ լուսարարապետը ըլլալով իբր Եւր-թանք» ըրած ըլլայ այդ 1300 տարուան հնութիւն եղող «հրաշագործ Մկրտիչ Եպիսկոպոսի Աւետարանը» որ ԵԱ. թուականը կը կրէ եղեր։ Այս ամբաստանութիւնը խտրու հերքած էր Ս. Կաթողիկոսը եւ ցոյց տուած էր թէ նոյն աւետարանը գանձարանին այնինչ մասին մէջ կը գտնուի։ Ուրախ ենք որ տարի անցնելէ վերջ, այսօր կը գտնուի տղա աւետարանը վանքին գանձարանին մէջ։

—Եթովպիոյ հովիւ Զլդատեան վարդապետին Աղէքսանդրիոյ մէջ եւ գայթակղելի ընթացք մը ունեցած ըլլալը տեղւոյն ապօրինի թաղ խորհուրդէն եւ

պաշտօնապէս հաստատուեցաւ։

—Վանայ Ս. Գրիգորեան աղջկանց որբանոցին 16 ի չափ օանուհիները, ըստ Պատրիարքարանի հրահանգին, նիւթականի պակասութեան պատճառաւ ճամբած են թէև, բայց գերմանական որբանոցը զանոնք ներս ընդունած է։ Մնացեալ 40 որբուհիները պատսպարելու համար ալ տեղւոյն մէջ հանգանակութիւն մը եղած է։

—Խոնուսի քահանաներէն մին գիշեր մը գաղտագողի գրացիի մը գոմը մտնելով գառնուկ մը կը գողնայ։ Եւ թէև գառնուկին միտէն կտոր մը ճամբուն վրայ կը ձգէ, բայց կրկին կը վաւերացուի գողութիւնը քահանային վրայ։

Լոռաքերի սէջ կը կարդանք հետեւեալը։

Կարնոյ նահանգին մէջ, հարակաւաւոր շներու տուած ներդրութիւնները ծայրաստիճանին հասած են։ Հայ վաճառականութիւնը մեռած է։ Ամենէն սիրուած երկու հայ երիտասարդներ, այս վերջերս անյայտացուելուն Կարնեցիք սուգի մատնուել են։ Շատ փնտռել են այդ երիտասարդները, բայց անկարելի եղեր է զանոնք գտնալ։

Նշան Պ. Ղալախան

17 յունվար 1906

ՅԱՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեան Գործ. Ժողովը ներկայով որ ժամանակ մը ի վեր պաշտօնական մարմիններէ եւ թէ ազգայիններէ յանձնարարեալ սղջատներ տե-

ժօրիս նորէն հարցաքննուեցաւ, ըսաւ թէ տեղեկութիւն ունէր որ Բրեսլը Սամուէլ Պային, աղջիկը եւ Քարլ Եուվանովիչ կամ Աշոտ Իզմիրի յիշախոխական այդ ձեռնարկութիւնները անձաքա պատրաստելէ ետքը, Կ. Պօլսոյ եկած են։ Հետեւաբար հասկցուելով որ եղեռնական այդ երկու ձեռնարկութիւնները ու պատրաստութիւնները իրարու հետ առնչութիւն ունին աւելի եւս տեղեկութիւն ստանալու համար Իզմիրին բերել տրուած քննութեանց տեղեկութիւնները կարգացուեցան եւ դարձեալ անոր խոստովանութեամբ հաստատուեցաւ որ Աստուած մի' արասցէ, Կ. Պոլսոյ մէջ ոճրագործութիւնէն ետքը, կարգախօսով մը փութով Իզմիր ալ տեղեկութիւն պիտի հաղորդուի։

(Շարունակելի)

Одговорникъ А. Курбетиянъ  
печатаатъ а Д. Тодоровъ и С-не—Варна